

Հազարամեկ հաճախող 2ար-
շահի վե ձուռնա իրերի կիւն-
իւրի բաւ օրուոր 7.12.
Սեփեի կիւն օրուոր 60
Արշի ալիւր 35
Սեփեի կիւն օրուոր 85
Ալիւր ալիւր 45
Բարա խմորի կիւն ալիւր
90 օրուոր փոքր բարա 80
օրուոր փոքր օրուոր
15 կիւնիւր 60 քր. տըր.

ՄԵԶՄՈՒՄԷ

ԱԷՊԱՆ

30 րոպա

30 րոպա

مجموعة اخبار
بك اوغلى تقسيم جادى 75
DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pére 65

Հաղթական միութնակի խոստովանութիւն Թ. ՌԱՅԵՍԻԱ միւրաճող օրուոր 1. Խաղաղութիւն՝ Պէտքովն առ ձառնէի թշուարեւ Ն. 65

ՍՄԻՔԱՆԷ 19 ՄԱՅԻՍ

Մէրհում Կ-Բաթրիկի միւր Աղար-
եան էֆէնի վեֆաթը միւրառիւթ-
թիւն է տնիւմիւրեւի բազար կիւ-
նիւ Ս. Աստուածածին Ս. Արուսեակ
քիւնիւնիւն միւրառիւթն սուրէթ-
տէ Գուտտար շէրիֆ թագաւորի վե-
րահմէթ տուալարը օգուտնաւ միւ-
րաբէր օլմալի, պու պապտէ ի-
նապիւնիւն տալէթնամէթիւն կէօն-
տէրիւն տըր:

Կ-Բաթրիկ Գալմաքամլը թա-
րափնտան ալըրըմը վեֆթիւր տա-
վէթնամէթիւն գիւրտէ տէրն իտէրիւ:

Առաջիկայ կիւնիւն 24 ամսոյ, առա-
ւօտեան ժամ 2/ին, Ս. Աստուածածին Ս.
թոռնիւն Եկեղեցի մէջ, հանդիսաւոր
Պատարագ պիտի մատուցուի, եւ Պաշտօն
պիտի կատարուի ի հանդիս Հոգեւոր ու-
րացեալ Հայրապետիս

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ Ժ.Ի

Գլխաւոր ամսնայն 66. Բաճախը,
աղագիւնը լուսանոցի Հանգուցեւոյն, եւ
հաւատացեալը կը հրաւիրուին օրն միւ-
թարական հանդիսի ներկայ գտնուիլ:
Բերա Կ. Պոլսոյ, 18 Մայիս 1899
ԱԻԵՏԻՍ ԱՐՔ. ԱՐՓԻԱՐԵԱՆ
Կ-Պատրիարքական Տեղապահ

ՕՐՈՒԱՆ ԽՆԻԻՐՆԵՐ

Նոր Կաթողիկոս-Պատրիարք մ'ըն-
տրելու թուականը քանի իր մօտե-
նայ, այնչափ ալ հոս եւ գաւառաց
մէջ անհամբերութեան եւ հետաքր-
քութեան ոգին կը շնչուի: Այս
երկու երեւոյթներուն ալ պատճառը
յայտնի է. ո՛չ ոք գիտէ ընտրութեան
եւրը, վերջնական խօսքը Սիւնհոգո-
սին(1) վերապահուած ըլլալուն հա-
մար:

(1) Բերականութենէ գիտնէ թէ ա-
մեն կանոն եւ դրութիւն սովորաբար բա-
ցառութիւն մ'ալ ունի, զոր յաճախ դրա-
կանիւ եւ իրականի մէջ վերացականիւն
հետ համաձայնեցնել անկարելի է: Ըստ
Ազգային Ներքին Կանոնադրութեան կրօ-
նական եւ Աւագանեաց ժողովը յանուն եւ
ի գիմաց Հասարակութեան հինգ ընտրելաց
ցանկ մը կը պատրաստէ եւ բարի վկայու-
թեամբ Սիւնհոգոսին կը ներկայացընէ: Հինգ
ընտրելիներն ալ, սակայն միեւնոյն չափով
եւ հաւասարապէս չեն կրնար իրենց ան-
ձին վրայ միացընել հասարակաց ձայնին
պահանջումները: Բաց աստի թուէից առա-
ւելութիւնն ալ նշանադուրկ է եւ ընտրու-
թեան նշարը չի կրնար այս կամ այն կող-
մը հակաբեցնել, որովհետեւ Սիւնհոգոսն ա-
մենէն քիչ թուէ անողն ալ Կաթողիկո-
սական Աթոռոյ վրայ կրնայ բարձրացը-
նել: Փոփոխութեան նիւ մ'ալ այս դը-
րութեան:

Ներքի բաժնեւոր է, ըստ իս, մեր
ներկայ մոտեմնութեան եւ իրա-
րանցման պատճառները:

Ա. Երբ Գրիգոր Պետրոս Բ. Լի-
բանան հաստատուած Կաթողիկոսնե-
րուն վերջինը, այս անցաւոր աշխարհ-
քէն հրաժեշտ կ'առնէր, ներքնապէս
գոհ ու երկանիկ էր, որովհետեւ իր
պարտքը ո՛չ միայն լիովին կատա-
րած էր, այլ եւ գիտէր թէ Աթոռը
Պոլիս պիտի փոխադրուի, ալըրդդ
Կաթողիկոսը արդէն այս նպատա-
կաւ բանակցութեան մէջ մտած եւ
հետեւեալը փայլուն ու մեկին վի-
ճակի մէջ դրած էր իր պաշտօնա-
վարութեան երկարամեայ վաճաճնը:
Սրբաբեւ միաբարեան ժամանակա-
միջոցի մը մէջ Զմեռուի արդիւնա-
շատ եւ բազմաթիւ առաքելութիւն-
ներու հիմնադրել Միաբանութիւնը
միշտ չէն, միշտ անբեժ պահած էր
Աթոռը եւ այս իրեն խնամոց եւ զե-
կալարութեան յանձնուած սրբազան
Աւանքն այլուր փոխադրած եւ իր
մէջ ոչ-անգամակցին յանձնած ժա-
մանակ կրնար ամենայն հանգար-
տութեամբ եւ մերկապարանոց ըսել
եւ հրատարակել թէ օգտակարապէս
եւ արդիւնաշատ կերպիւ պարտքը
կատարած է: Անտոն Պետրոս Թ.,
Կաթողիկոսական իշխանութեան զե-
կըն ձեռք առած ժամանակ ըտրու-
վին չէն եւ որոշ կացութեան մը հան-
դէպ կը դառնէր: Այն ինչ դողդո-
շուն քայլերով Կաթողիկոսական Ա-
թոռոյ պատուանդաններուն վրայ
բարձրացած հրապարակական բա-
նախօսութեան մը մէջ, զոր գեռ մեղ-
մէ շատեր կը յիշեն, կ'օրհնէր իր
ուրիշ երաշխորդ Նախդեպ յեշտա-
կըն ու պաշտօնավարութիւնը:

Անտոն Պետրոս Թ. քողոք ո՛չ մի-
այն չէն պահեց Կաթողիկոսական Ա-
թոռն, այլ եւ դիտցաւ աւելի փայ-
լուն գրաւականներով շրջապատել
զայն: Այլապէս բան մը յուսալ իրմէ,
անոր նկարագրը եւ կեցական կամ-
քը չգիտնալ ըսելով նշանակէ:(1) Ան-

(1) Հասուն շատ աւելի չէն եւ հարուստ
կրնար Աթոռը ձգել, եթէ Բերայի մեծ հըր-
դէն օրտաճած չ'ըլլար: Կ'ըսուի թէ իր
անձնական գոյքն եւ մանաւանդ երկու
սնտուկ, անշուշտ գոնադիւր, Մարտապետաց
քով պահել կուտար: Երբ Մարտապետա-
նոցին հոյժ ձարտին ըլլալուն պիտի հա-
ղորդուցուի իրեն, առաջին հարցումն ե-
ղաւ. «Սնտուկները ազատուցանե՞ն»: Մեր-
ժողական պատասխանին վրայ սկսել է
արտասուել եւ ըսել. «Եթէ այն երկու
սնտուկն ազատուած ըլլային Աթոռին վը-
նաները կրնայի գոցել եւ աւելի փառա-
ւոր չ'իյնէր տալ Մարտապետանոցն ու Կա-
թողիկոսարանը»: Հանդիւ այսու այն ա-
ւելիչ հարցին վերջն ալ մասամբ Աթոռոյ
յիստը դարձանց եւ մինչեւ անգամ կըր-
ցաւ իր ինքնազգեղանոց-դարձանս ձգած
բացը, 30,000 գահեկան, վճարել:

կից ի վեր 28 տարիներ անցան եւ
ներկայապէս ըտրովին ուրիշ գոյնե-
րով կը գտնենք Աթոռը: Եղաւ ժա-
մանակ որ Ստեփանոս Պետրոս Ժ. քո-
ղոք տալով հանդերձ պէսպէս
դժուարութեանց հարկադրեցաւ ան-
միջական պէտքերուն գոհացումտալ:
Նորանոր թեմեր ստեղծելու հարկին
մէջ էր. բնական էր ուրեմն որ իր
Նախորդաց ընթացած ուղիէն դուրս
ելլէր. 18 տարի շարունակ ամէն բա-
նի հասաւ, արտաքին փայլ մը տուաւ
մեղի առանց մեր վրայ բեռ մ'ըլ-
լալու եւ առանց ալ մեղի զգացնելու
մեր ներքինը: Սուր իմացականու-
թեամբ օժտեալ շատ աւելի բարձր
խոշալական դարձաւարներ, ձգտում
ներ ունէր, որով շատ անգամ ստիպ-
ուեցաւ իր բարոյական ոյժն ու դրա-
մական կարողութիւնը հոս ու հոն
տողողել: Գոցէ հասնէր նպատա-
կին՝ եթէ անանկնկալ մահը վրայ
չ'հասնէր: Կան նկարագրիւններ, որ ի-
րենք եւ իմ կը յղանան, առանձինն
կը գործեն, նպատակներուն հասնե-
լէն վերջ միայն եղելութիւնը մատ-
նանել կ'ընեն: Այսպիսի դէմք մըն
էր Ազարեան Հայրը:

Այս դրութեան ի տես ամենա-
բնական է իրարանցումը. հասարա-
կական դատաստանը շատ անգամ
սխալ է, որովհետեւ չի կրնար հաս-
կընալ արտաքին կարգի աւելն: Ելմեւ-
մոխր յանձնաժողով մը լաւագոյն ոյ-
ժերէ կազմուած կրնայ ամենայն ինչ
դաշմանել Հասունի օրով կար ար-
դէն Գործարքի ժողով մ'անջատ կը-
րծական ժողովէն, որ Կաթողիկոսին
նախագահութեան ներքեւ ըտրը հա-
սաքալութեան ելեւմուտքը կը մա-
տակարարէր: Նախկին դրութեան
դառնալու ենք եւ Սիւնհոգոսական
Հարք եւ օրուան Վարչականները զայս
պահանջելու են նոր ընտրուելիք Կա-
թողիկոս-Պատրիարքէն:

Բ. Կան փոփոխութեան կարեւոր
բաներ. պէտքեր՝ որոնց համար աշ-
խարհականաց գործունէութեան հար-
կաւորութիւն կայ: Կղերին աշակցե-
լու է աշխարհական դասը: Վարչա-
կան ժողովներու գոյութիւնն ան-
ուանական ըլլալու չ'է. կանոնաւոր
նիստեր եւ գործադրութիւն ամէն
տրուած վճիռներու օգտակար ըլլա-
լէն զատ միակ միջոցն է գործերուն
լաւ ընթանալուն: Միւս կողմէ Աւագ-
թեմին կղերին աւելի ոյժ եւ կազմա-
կերպութիւն տալու ենք. ասոնց մէջ
կարեւոր ոյժեր կան եւ կը կարօտին
այնպիսի Անձնաւորութեան որ զա-
նոնք գործածէ: Մեր մէջ մարդ չ'է
որ կը պակտի, այլ գործունէութեան

ասպարէզ: Ասոնց պէտքը սակայն
թէ հոս եւ թէ գաւառաց մէջ զգա-
լի է:

Գ. Նմանապէս դաւառներուն
համար զգալի տնօրինութիւններ
ընելու կարգն այլ եւս եկած է:
Ամէն թեմ կէտ նպատակի ունի-
նալու է Կ-Պատրիարքական Աւագ-
թեմն, որոյ թեմական ալ հարկ
չկայ ըսել թէ իրենց սէրը, համակ-
րանքն ու վստահութիւնը կատարե-
լապէս ունենալու վիճակին մէջ ըլլա-
լու է: Գաւառական թեմերու մէջ
մեր մինչեւ հիմա ունեցած վարչա-
կան եւ դրամական տատամսները
զգալի եղած են. նոր Եպիսկոպոսներ
ձեռնադրելով, նոր Աւագնորդ-վար-
դապետներ անուանելով չչառանանք
միայն: Այլ թեմերը կը թեմալու եւ օ-
րինակելի ընծայելով է որ կրնանք՝
առանց սրնդի եւ քնարի՝ նորանոր
հօտերու տիրանալ (1), փոխանակ
անտեղի իրարանցման, որք միշտ միտ-
քերը եւ կիրքերը կը հրահէ. ահա այս
դրութեան վրայ հիմնելու ենք ըն-
թացքնիս:

— Այսպիսի դժուարին եւ ստու-
գիւ կնճռալից պարագաներու մէջ
կը գումարուի Սիւնհոգոսն (2), ըստ

(1) Վանքն եւ ուրիշ տեղերէ իմաց-
ութեանս ուղղուած գրութիւնք ընտրու-
թեան օր յառաջ կատարուիլը կը պահան-
ջեն: Իրաւունք ունին խեղճերը. այնպիսի
աւագ շահեր ու խեղճիւններ կան, որոնց
լուծումը նոր Կ-Պատրիարքն եւ իմ կրնայ
տալ: Ընտրութեան հոգեւր պէտք չէ սա-
կայն մոռցնել տան միայն Աւագնորդ-
վարդապետով կառավարող հօտերը: Բա-
նի որ ասոնք ուղղակի Պատրիարքական
իրաւասութեան ներքեւ կը գտնուին, հե-
տեւեալոր դասնք մոռնալու չ'է. խնամքի,
օգնութեան եւ նպաստի պէտք ունին, ո-
րովհետեւ թէ ստուարաթիւ են եւ թէ նո-
րահաստատ:

(2) Լատին Եկեղեցին անգամ սովորու-
թիւն ունի որ եւ է խնդրոյ եւ ընտրու-
թեան համար գումարուած Սիւնհոգոսին
վճագրերը (acls) հրատարակել եւ առան-
ձինն գրեցողներով զանոնք մեկնել եւ ժո-
ղովրդեան հասկընալի ընել: Մեր մէջ
ասոր հակառակն է. Ո՛չ տեղական եւ գա-
ւառական կղերը եւ ոչ ալ աշխարհակա-
նաց դասն՝ անցած դարձածը գիտէ եւ օ-
րին մէկն ալ կը շուարի կը միայ, երբ ա-
նանկալ դէպք մը կը ստիպէ Սիւնհոգոսին
որոշման դիմել. ասոր ալ օրինակն վեր-
ջերս տեսանք. Վարչական ժողովքն ընե-
լիք չ'էր գիտէր. արդեօք վարդապետն
ալ կրնայ Կաթողիկոս-ընտրելի ցուցնել,
ինչպէս որ երբեմն էր: Ո՛չ ոք գիտէր վեր-
ջին անգամ գումարուած Սիւնհոգոսին այս
նկատմամբ տուած վճիռը. կ'ըլլայ չ'ըլլարի
տաքուկ վիճաբանութեանց մէջ մէյ մ'ալ
յանկարծ իմացուցեալ թէ վարդապետ չ'ըլ-
լար եղեր, որովհետեւ այն ինչ թուականին
գումարուած ժողովն արդէն իր վճիռն
տուած է եղեր:

ՊԵՐՏԵՐԻՆԱԿԻՆ		ՍԿԼԱՍԽԱՆԻՆ	
12 30		6 15	ՊԵՐՏԵՐ
1 15		7	ԳԼԿԻՆԻ
2		7 40	ՊԵՐՏԵՐ
2 20		8 20	
2 30		9	
3 5		9 40	
3 35	ԳԼԿԻՆԻ	10 15	ԳԼԿԻՆԻ
3 50		40	ԳԼԿԻՆԻ
4 20		11	
4 50		11 35	
5 35	ՊԵՐՏԵՐ	12	